

Մայիսի 17-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

08/05/12թ. «Իմպուլս»-«Ուլիս» խաղին «Ուլիս» թիմի ֆուտբոլիստ Էդվարդ Հովհաննիսյանի հեռացման, մրցակցին թռիչքով ոտքով հարվածելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, «Ուլիս» ֆուտբոլային ակումբին տուգանել 50000 դրամ:

08/05/12թ. «Իմպուլս»-«Ուլիս» խաղին «Իմպուլս» թիմի ֆուտբոլիստ Էդուարդ Կակոսյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Էրեբունի-Դիլիջան» մարզական ակումբին տուգանել 25000 դրամ:

08/05/12թ. «Իմպուլս»-«Ուլիս» խաղին «Իմպուլս» թիմի գլխավոր մարզիչ Արմեն Գյուլբուդադյանցի և «Իմպուլս» թիմի գլխավոր մարզչի օգնական Ստեփան Դեմիրճյանի ոչ մարզական պահվածքի համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ հայտարարել խիստ նկատողություն, «Էրեբունի-Դիլիջան» մարզական ակումբին տուգանել 50000 դրամ:

13/05/12թ. «Արարատ»-«Գանձասար» խաղին «Արարատ» թիմի ֆուտբոլիստ Մարտիկ Մկրտումյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 25000 դրամ:

16/05/12թ. «Շիրակ»-«Միկա» խաղին «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Կարեն Ալեքսանյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) (2 դեպք) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 4ա կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 50000 դրամ:

12/05/12թ. «Իմպուլս»-«Բանանց» խաղի տեղափոխման մասին գրությունը ՀՖՖ ուշ ներկայացնելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 34-րդ կետի համաձայն՝ «Էրեբունի-Դիլիջան» մարզական ակումբին տուգանել 5000 դրամ:

08/05/12թ. «Բյուրեղ-96»-«Շիրակ-96» խաղին «Բյուրեղ-96» թիմի ֆուտբոլիստ Արման Գրիգորյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, Բյուրեղավանի մանկապատանեկան մարզադպրոցին տուգանել 3000 դրամ:

08/05/12թ. «Բյուրեղ-96»-«Շիրակ-96» խաղին «Շիրակ-96» թիմի ֆուտբոլիստ Կարապետ Արտոյանի հեռացման, մրցակցին ոտքով հարվածելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 5000 դրամ:

08/05/12թ. «Բյուրեղ-96»-«Շիրակ-96» խաղին «Բյուրեղ-96» թիմի ֆուտբոլիստ Հակոբ Բարսիլյանի հեռացման, մրցակցին հարվածելու և հայիոյելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, Բյուրեղավանի մանկապատանեկան մարզադպրոցին տուգանել 10000 դրամ:

08/05/12թ. «Բյուրեղ-96»-«Շիրակ-96» խաղին «Բյուրեղ-96» թիմի մարզիչ Էդիկ Պիճիկյանի հեռացման, մրցավարի որոշումներին սիստեմատիկ չհամաձայնվելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 20-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, Բյուրեղավանի մանկապատանեկան մարզադպրոցին տուգանել 10000 դրամ:

08/05/12թ. «Բանանց-96»-«Միկա-96» խաղը չկայանալու, «Բանանց-96» թիմի խաղին չներկայանալու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ «Բանանց-96» թիմին գրանցել տեխնիկական պարտություն, «Բանանց» ֆուտբոլային ակումբին տուգանել 20000 դրամ:

«Բանանց-96», «Բանանց-1-98», «Բանանց-1-99», «Բանանց-1-2000» թիմերի առաջնությանը մասնակցելուց հրաժարվելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնազրքի 18-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Բանանց» ֆուտբոլային ակումբին տուգանել 100000 դրամ:

09/05/12թ. «Իջևան-98»-«Նաիրի-98» խաղը չկայանալու, ոստիկանության աշխատակիցների չներկայանալու և խաղի տեղափոխման ժամկետները խախտելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ «Իջևան-98» թիմին գրանցել տեխնիկական պարտություն, «Նիկարմ» ֆուտբոլային ակումբին տուգանել 30000 դրամ:

08/05/12թ. «ՎՖԴ-Թալգրիգ-96»-«Արարատ-96» խաղին «ՎՖԴ-Թալգրիգ-96» թիմի ֆուտբոլիստ Արսեն Հովհաննիսյանի հեռացման, մրցակցին դարպասը գրավելու ակնհայտ հնարավորությունից զրկելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, Վանաձորի ֆուտբոլի դպրոցին տուգանել 2000 դրամ:

15/05/12թ. «Շիրակ-96»-«ԽՍՕՄՄ-96» խաղին «ԽՍՕՄՄ-96» թիմի ներկայացուցչի նախախաղային խորհրդակցությանը չմասնակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ ԽՍՕՄ մարզադպրոցին տուգանել 3000 դրամ:

15/05/12թ. «Արտաշատ-98»-«Անի-98» խաղին «Անի-98» թիմի ներկայացուցչի նախախաղային խորհրդակցությանը չմասնակցելու, խաղը ուշ սկսելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 17-րդ և 18-րդ կետերի համաձայն՝ Մարալիկի մանկապատանեկան մարզադպրոցին տուգանել 5000 դրամ:

12/05/12թ. «Հրազդան-Ֆգ-11»-«Գյումրի-Ֆգ-11» խաղին «Հրազդան-Ֆգ-11» թիմի ֆուտբոլիստ Միքայել Խուդավերդյանի հեռացման, մրցակցին դարպասը գրավելու ակնհայտ հնարավորությունից զրկելու համար, ՀՖՖ-ի կարգապահական

կանոնակարգի 21-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ որակագրկել 1 խաղով, Հրազդանի քաղաքապետարանին տուգանել 8000 դրամ:

13/05/12թ. «Թալգրիգ-Ֆգ-11»-«Շահումյան-Ֆգ-11» խաղին «Թալգրիգ-Ֆգ-11» թիմի ֆուտբոլիստ Անդրանիկ Ծատուրյանի հեռացման, մրցակցին դարպասը գրավելու ակնհայտ հնարավորությունից զրկելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 21-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ որակագրկել 1 խաղով, «Թալ-Գրիգ» ՍՊԸ-ին տուգանել 8000 դրամ: